Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 5-ի N 644 - Լ որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « » ——— 20 թ.

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը («ՀԿԵ» ՓԲԸ), այսուհետ՝ «Երկաթուղի», ի դեմս Ֆիրմային տրանսպորտային սպասարկման ճանապարհային կենտրոնի (ՖՏՍՃԿ) պետ **Դորոխին Սերգեյ Վլադիմիրի**, ով գործում է «ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մելնիկով Ալեքսեյ Վալերիի կողմից տրված 19.03.2022 թ. թիվ 31 Լիազորագրի հիման վրա, մի կողմից, և **«ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ** այսուհետ՝ «Վճարող», ի դեմս **տնօրեն Հենրիկ Մալերյան Փաշոյի**, ով գործում է **Կանոնադրության** հիման վրա, մյուս կողմից, այսուհետ միասին՝ «Կողմեր», կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1. Սույն Պայմանագիրը կարգավորում է Կողմերի փոխհարաբերությունները՝ կապված հաշվարկների կազմակերպման և փոխադրավճարների, գանձումների, ինչպես նաև Հարավկովկասյան երկաթուղով բոլոր տեսակի հաղորդակցություններում երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ժամանակ «ՀԿԵ» ՓԲԸ հասանելիք այլ վճարների (այսուհետ՝ Վճարումներ) հետ:

1.2. Հայաստանի Հանրապետության երկաթուղով բեռնափոխադրումների համար վճարը հաշվարկվում է Երկաթուղու պաշտոնական կայքում (www.railway.am) տեղադրված «ՀԿԵ» ՓԲԸ Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագնային

քաղաքականության» այն կանոններով և դրույքներով, որոնք գործում են փոխադրման փաստաթղթերում բեռը փոխադրման ընդունելու մասին օրացուցային դրոշմակը դնելու ամսաթվին:

1.3. «ՀԿԵ» ՓԲԸ կայարաններում բեռնափոխադրումների կազմակերպման հետ կապված լրացուցիչ գանձումները և այլ վճարները հաշվարկվում են փոխադրման փաստաթղթերում բեռը փոխադրման ընդունելու մասին օրացուցային դրոշմակը դնելու ամսաթվին գործող Երկաթուղու պաշտոնական կայքում (www.railway.am) տեղադրված Սակագնային քաղաքականության N 11 հավելվածի՝ «Բեռնափոխադրումների կազմակերպման ժամանակ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ կողմից տրամադրվող աշխատանքների և ծառայությունների գնացուցակի» (այսուհետ՝ Գնացուցակ) դրույքաչափերով:

1.4. Սույն Պայմանագրով Վճարողին տրվում է անձնական հաշվի ծածկագիր **65900741** (այսուհետ՝ ԱՀ), որը կիրառվում է Կողմերի միջև սույն Պայմանագրի շրջանակներում հաշվարկների կատարման ժամանակ, և վճարողի երկաթուղային ծածկագիր **65900741:**

1.5. Վճարողի համար վճարման և Երկաթուղու համար բեռնափոխադրումների հետ կապված Վճարումների գանձման հիմք է հանդիսանում ԱՀ և Վճարողի լրիվ անվանման նշումը փոխադրման փաստաթղթերում որպես վճարումն իրականացնող անձ:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Երկաթուղին պարտավոր է՝

2.1.1. Մատուցել ծառայությունները պատշաճ ձևով՝ համաձայն Վճարողի հայտի (Հավելված 1), որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

2.1.2. Իրականացնել սույն Պայմանագրի շրջանակներում մուտքագրված գումարների և Վճարումների հաշվառումը Վճարողի ԱՀ-ով, ինչպես նաև Վճարողի ԱՀ-ից Վճարումների դուրսգրումը:

2.1.3. Վճարողի գրավոր դիմումի հիման վրա ներկայացնել հաշիվ՝ Վճարողի ԱՀ-ին Երկաթուղու Վճարումների գանձման համար բավարար դրամական միջոցների փոխանցման նպատակով:

2.1.4. Անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային փոստով տեղեկացնել Վճարողին Երկաթուղուն հասանելիք Վճարումների վճարման պարտքի առաջացման մասին:

2.1.5. Մատուցել Վճարողին փոխադրման գործընթացին զուգընթաց աշխատանքներ և ծառայություններ՝ համաձայն Գնացուցակի:

2.1.5.1. Աշխատանքների և ծառայությունների արժեքի և ցանկի փոփոխության և լրացման դեպքում պարտադիր ծանուցել Վճարողին՝ Երկաթուղու պաշտոնական կայքում (www.railway.am) և ՋԼՄ-ներում տեղեկատվության հրապարակման՝ նոր դրույքաչափերով հաշվարկներ կատարելու ամսաթվից առնվազն 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ:

2.1.6. Իրականացնել Վճարողի հայտերի ընդունում և քննարկում Վճարողի կողմից սույն Պայմանագրի 2.2.1-ին, 2.2.2-րդ և 2.2.3-րդ կետերի պայմանների կատարման դեպքում:

2.1.7. Տրամադրել «ՀԿԵ» ՓԲԸ պատկանող շարժակազմ և ընդունել բեռները փոխադրման Վճարողի համաձայնեցված հայտերի հիման վրա Վճարողի կողմից սույն Պայմանագրի 2.2.1-ին, 2.2.2-րդ և 2.2.3-րդ կետերի պայմանների կատարման դեպքում:

2.1.8. Դադարեցնել պարտավորությունների կատարումը՝ կապված բեռնափոխադրումների, ծառայությունների մատուցման հետ՝ Վճարողի ԱՀ-ում Վճարումների մարման համար բավարար դրամական միջոցների բացակայության դեպքում:

2.2. Վճարողը պարտավոր է՝

2.2.1. Ապահովել Վճարողի ԱՀ-ին Երկաթուղու կողմից ծառայությունների մատուցման դեպքում Վճարումների գանձման համար բավարար դրամական միջոցների առկայությունը:

2.2.2. Կատարել վճարումները Երկաթուղուն լրիվ ծավալով 100% կանխավճարի տեսքով ոչ ուշ, քան ծառայությունների մատուցումից 3 (երեք) օրացուցային օր առաջ:

2.2.3. Ապահովել Երկաթուղուն հասանելիք վճարների լրիվ և ժամանակին վճարումն ըստ մատուցված ծառայությունների և փոխադարձ հաշվարկների ակտերի:

2.2.4. Նշել ԱՀ ՝

- փոխադրման և առաջնային հաշվապահական փաստաթղթերում, որոնք ձևակերպվում են երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ժամանակ, որոնց վճարումը

կատարում է Վճարողը՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ում ներկայացված կարգի,

- սույն Պայմանագրի կատարման հետ կապված ֆինանսական փաստաթղթերում, նախապահանջներում:

2.2.5. Բեռները փոխադրման ներկայացնել համաձայնեցված ամսական ծավալներով (Հավելված 1):

2.2.6. Երկաթուղու հարցմամբ ներկայացնել փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են բեռնափոխադրումների ժամանակ հաշվարկների հաստատման համար:

2.2.7. Ձևակերպել վճարման հանձնարարագրեր Երկաթուղուն դրամական միջոցներ փոխանցելու նպատակով՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 3-ում սահմանված կարգի:

2.2.8. Իրականացնել Երկաթուղու նկատմամբ ԱՀ-ի ենթահաշիվներում առաջացած պարտքի վճարում առանձին վճարման հանձնարարագրերի միջոցով ոչ ուշ, քան պարտքի առաջացման օրվանից 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

2.2.9. Վճարողի ԱՀ-ի հաշիվների վրա առաջացած պարտքի վճարումը 5 բանկային օրից ուշացման դեպքում վճարողը վճարում է տույժ չվճարված գումարի 0,02% (զրո ամբողջ երկու հարյուրերորդական տոկոս) չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

2.2.10. Կատարել մաքսային տարանցում մաքսային ընթացակարգը եզրափակելու հետ կապված մաքսային գործառնություններ (մաքսային մարմին ներկայացնել այն փաստաթղթերը և տեղեկությունները, որոնց ցանկը սահմանված է Միության մաքսային օրենսգրքի 159-րդ հոդվածով):

3. Հաշվարկների կարգը

3.1. Վճարողը Երկաթուղուց ստացված կանխավճարի հաշվի հիման վրա Երկաթուղու հաշվարկային հաշվին է փոխանցում դրամական միջոցներ որպես կանխավճար, որոնք բավարար են Երկաթուղուն հասանելիք Վճարումների մարման համար: Դրամական միջոցների ստացման ամսաթիվ է համարվում Երկաթուղու հաշվարկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման ամսաթիվը՝ հաստատված բանկի քաղվածքով:

3.2. Երկաթուղուն հասանելիք Վճարումների գումարների ամրագրումը Վճարողի ԱՀ-ին իրականացվում է բեռը փոխադրման ընդունելու ամսաթվին: Վճարողի ԱՀ-ից Վճարումների դուրսգրումը (վերջնահաշվարկ) իրականացվում է Երկաթուղու կողմից բեռնափոխադրումների և այլ ծառայությունների մատուցման ավարտի ամսաթվով:

3.3. Երկաթուղին մինչև ընթացիկ ամսվա 10-ը կազմում և ներկայացնում է Վճարողին մատուցված ծառայությունների և փոխադարձ հաշվարկների ակտի երկու օրինակ նախորդ ամսվա համար՝ կցելով առաջնային փաստաթղթերը և հաշիվ-ապրանքագրերը:

3.4. Վճարողը պարտավոր է ստորագրել մատուցված ծառայությունների և փոխադարձ հաշվարկների ակտը և հանձնել ստորագրված ակտի մեկ օրինակը Երկաթուղուն՝ այն ստանալու օրվանից 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում:

3.5. Սույն Պայմանագրի շրջանակներում հաշիվ-ապրանքագրերը, մատուցված ծառայությունների և փոխադարձ հաշվարկների ակտերը, առաջնային փաստաթղթերի ցուցակները և այլ փաստաթղթերը հանձնվում են Վճարողին «ՀԿԵ» ՓԲԸ Տրանսպորտային ծառայությունների բաժնի միջոցով:

3.6. Մատուցված ծառայությունների և փոխադարձ հաշվարկների ակտի տվյալների հետ հիմնավորված անհամաձայնության դեպքում Վճարողը սույն Պայմանագրի 3.4-րդ կետով սահմանված ժամկետում ստորագրում է այն իր անհամաձայնություններով և հանձնում Երկաթուղուն: Ակտի փոխանցման հետ միասին Վճարողը հանձնում է տարաձայնությունները հաստատող փաստաթղթերը (ակտեր, հաշվարկներ, հաշիվներ, հաշիվ-ապրանքագրեր և այլ փաստաթղթեր):

3.7. Երկաթուղու կողմից տարաձայնությունների ընդունման դեպքում Կողմերը կատարում են ակտում Կողմերի լիազորված ներկայացուցիչների ստորագրությամբ հաստատված փոփոխությունները: Սույն Պայմանագրի 3.4-րդ կետով սահմանված ժամկետում Վճարումների չհամաձայնեցված գումարները Կողմերը քննարկում են նախապահանջային կարգով:

3.8. Վճարողի կողմից սույն Պայմանագրի 3.4-րդ կետով սահմանված ժամկետում մատուցված ծառայությունների և փոխադարձ հաշվարկների ակտը չներկայացնելու դեպքում ակտը համարվում է համաձայնեցված Երկաթուղու խմբագրությամբ:

3.9. Պայմանագրի արժույթն է հայկական դրամը: Վճարման պահ է համարվում Երկաթուղու հաշվարկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման օրը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

5.1. Կողմերից և ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով իր ցանկացած պարտավորությունների ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու համար, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, այն է՝ ջրհեղեղ, հրդեհ, երկրաշարժ և այլ բնական աղետներ, սույն Պայմանագրի կնքման պահից հետո ծագած ցանկացած պետական մարմինների ակտեր կամ գործողություններ, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Եթե այդ հանգամանքներից որևէ մեկն անմիջական ազդեցություն է ունեցել սույն Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավորությունների կատարման վրա, ապա պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան որ գործել են այդ ուժերը:
5.2. Այն Կողմը, որը չի կատարում սույն Պայմանագրով իր պարտավորություններն անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով, պարտավոր է անմիջապես ծանուցել մյուս Կողմին սույն Պայմանագրի 5.1-ին կետում նշված հանգամանքների, դրանց տևողության և ավարտի մասին, սակայն ոչ ուշ, քան դրանց սկսելու և ավարտի ամսաթվից 5 (հինգ) օրացուցային օր: Ծանուցման մեջ նշված փաստերը պետք է հաստատվեն ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրված և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահի կողմից ստորագրված, կնիքով հաստատված պաշտոնական փաստաթղթերով:

5.3. Ծանուցման բացակայությունը կամ ուշացումով ծանուցումը զրկում է Կողմին սույն Պայմանագրի 5.1-ին կետում նշված հանգամանքներից յուրաքանչյուրին հղում կատարելու իրավունքից՝ որպես իր պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությունից ազատող հիմք:

6. Վեճերի լուծումը

6.1. Սույն Պայմանագրի կատարման ժամանակ առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, որոնք կարող են անցկացվել, այդ թվում՝ նաև փոստով գրությունների ուղարկման, ֆաքսիմիլային հաղորդագրությունների փոխանակման միջոցով:

6.2. Եթե բանակցությունների արդյունքում Կողմերը համաձայնության չեն գալիս, ապա բոլոր վեճերը կարող են լուծվել նախապահանջային կարգով: Նախապահանջի քննության ժամկետը կազմվում է նախապահանջն ստանալու օրվանից 30 (երեսուն) օր:

6.3. Եթե Կողմերը չեն կարգավորում վեճերը բանակցությունների միջոցով և/կամ նախապահանջային կարգով, ապա դրանք լուծվում են դատական կարգով՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի մեջ փոփոխություններ, լրացումներ կատարելու և դրա լուծման կարգը

7.1. Սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք Կողմերը ձևակերպում են սույն Պայմանագրին կից Լրացուցիչ համաձայնագրով:

7.2. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ Պայմանագրի լուծման մտադրության մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով Պայմանագրի լուծման նախատեսվող ամսաթվից 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ:

7.3. Սույն Պայմանագիրը համարվում է լուծված լուծման մասին ծանուցման մեջ նշված ամսաթվից՝ իրականացված բեռնափոխադրումների և մատուցված ծառայությունների հաշվարկներով Կողմերի բոլոր պարտավորությունների կատարման պայմանով:

7.4. Սույն Պայմանագիրը լուծելիս Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ և իրականացնում են համապատասխան վճարումներ մինչև Պայմանագրի լուծման ամսաթիվը:

8. Այլ պայմաններ

8.1. Կողմերի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, երկաթուղային տրանսպորտում գործող նորմատիվ ակտերով, ՄԲՀՀ, միջազգային պայմանագրերով և այլ համաձայնագրերով, որոնց մասնակիցներն են սույն Պայմանագրի Կողմերը:

8.2. Կողմերը պարտավորվում են չհրապարակել այն տեղեկատվությունը, որն իրենց հայտնի է դարձել սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքում, բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.3. Գտնվելու վայրի, փոստային հասցեի, հեռախոսահամարների, ֆաքսի, բանկային և այլ վավերապայմանների փոփոխության դեպքում Կողմերը պարտավոր են փոփոխության ամսաթվից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել միմյանց:

8.4. Սույն Պայմանագիրը կազմված է հայոց և ռուսաց լեզուներով, ստորագրված և կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրին:

9. Պայմանագրի գործողության ժամկետը

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու ամսաթվից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը (երեսունմեկը) ներառյալ:

9.2. Սույն Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է յուրաքանչյուր հաջորդ օրացուցային տարով, ոչ ավելի, քան 3 անգամ, եթե Կողմերից ոչ մեկը չի հայտնում դրա դադարեցման մասին Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:

10. Կողմերի հասցեները և բանկային վավերապայմանները

Երկաթուղի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն («ՀԿԵ» ՓԲԸ)	**Վճարող՝ «ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ**
Հասցե՝ 0005, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 50	Հասցե՝ Քաջազնունու փ.շ/2/22 կենտրոն
Հեռախոս/ֆաքս՝ (+374 10) 57-27-22	0018, Երևան, Հայաստան
Հեռ.: (+374 10) 57-36-74	Հեռ. քաղ.՝ +9217594083, +37455162078
Հ/համար ՀՀ դրամ՝ 160413023260	Հեռ. բջջ.՝ +9217594083, +37455162078
Բանկ՝«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ Էրեբունի մ-ճ	Հ/համար ՀՀ դրամ ՝ 1510056263880100
ՀՎՀՀ՝ 00448268	Բանկ՝ Արարատբանկ ՓԲԸ
Էլ. հասցե՝ ctu@railway.am	ՀՎՀՀ՝ 00505151
Կայք՝ www.railway.am	Էլ. հասցե՝
ՖՏՍՃԿ պետ՝ Ս. Վ. Դորոխին	**Տնօրեն՝ Հենրիկ Մալերյան Փաշոյի**
_____	_____
Ստորագր. Կ.Տ.	Ստորագր. Կ.Տ.

Հավելված N 1

« »_____ 20 թ. կնքված պայմանագրի

Приложение 1

форма ГУ-12

Перевозчик ***ЗАО «ЮЖНО-КАВКАЗСКАЯ ЖЕЛЕЗНАЯ ДОРОГА»*** Дата согласования заявки _____ 2022г.

Дата регистрации заявки _____ 2022г

_____ (должность) _____ (подпись) _____ (ФИО)

Заявка на перевозку грузов _____ № [ ] на период с _____ 2022 г. по _____ 2022 г.

Станция отправления [ ] (код станции) _____ (наименование станции и инфраструктуры отправления) Признак отправки [ ]

Железнодорожный путь необщего пользования _____ (почтовый адрес владельца пути необщего пользования) [ ] (ИНН) Отметка о согласовании [ ] владельца пути необщего пользования

Номенклатурная группа груза [ ] (код) _____ (наименование) Вид сообщения _____

Грузоотправитель [ ] (ИНН) _____ (полное наименование, почтовый адрес)

Плательщик [ ] (код плательщика) [ ] (ИНН) _____ (полное наименование, почтовый адрес)

Экспедитор [ ] (ИНН) _____ (полное наименование, почтовый адрес)

№ договора _____ Подача вагонов, контейнеров _____ Принадлежность _____

№ п/п	Дата	Код и точное наименование груза	Назначение			Количество тонн	Род вагонов, грузоподъемность контейнеров			Примечание
			Наименования станций, инфраструктуры, страны назначения,	Коды			заявленное кол-во	согласованное кол-во	Наименование	

			передаточной станции, грузополучателя, и др.	Коды станции назначения, погран. передаточные станции, станции передачи и др.	страны назначения					
ИТОГО										

Место для печати

«За достоверность сведений, внесенных в заявку, несу ответственность»

Представитель грузоотправителя _____ _____ _____

должность подпись ФИО

Дата _____ 2022г

«Отметка о согласовании заявки перевозчиком» _____

«Отметка о согласовании заявки владельцем инфраструктуры» _____

Երկաթուղի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն («ՀԿԵ» ՓԲԸ)

Վճարող՝ «ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ

Հասցե՝ 0005, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 50

Հեռախոս/ֆաքս՝ (+374 10) 57-27-22

Հեռ.: (+374 10) 57-36-74

Հ/համար ՀՀ դրամ՝ 160413023260

Բանկ՝«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ Էրեբունի մ-ճ

ՀՎՀՀ՝ 00448268

Էլ. հասցե՝ ctu@railway.am

Կայք՝ www.railway.am

ՖՏՍՃԿ պետ՝ Ս. Վ. Դորոխին

_____

Ստորագր. Կ.Տ.

Հասցե՝ Քաջազնունու փ.շ/2/22 կենտրոն 0018, Երևան, Հայաստան

Հեռ. քաղ.՝ +9217594083, +37455162078

Հեռ. բջջ.՝ +9217594083, +37455162078

Հ/համար ՀՀ դրամ ՝ 1510056263880100

Բանկ՝ Արարատբանկ ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 00505151

Էլ. հասցե՝

Տնօրեն՝ Հենրիկ Մալերյան Փաշոյի

_____

Ստորագր. Կ.Տ.

Հավելված N 2

« »_____ 20 թ. կնքված

պայմանագրի

Փոխադրման փաստաթղթերի ձևակերպման կարգ

Արտահանման, ներմուծման բեռների, ինչպես նաև միջպետական հաղորդակցությունում ընթացող բեռների փոխադրման ժամանակ փոխադրման փաստաթղթերի ձևակերպումը կատարվում է՝ համաձայն հետևյալ կարգի:

1. Հարավկովկասյան երկաթուղով ընթացող բեռների փոխադրումների համար ՄԲՀՀ փոխադրման փաստաթղթերի ձևակերպման ժամանակ փաստաթղթերի 3-րդ սյունակում՝ «Առաքողի հայտարարություններ» և փաստաթղթերի 23-րդ սյունակում՝ «Բեռնափոխադրման վճարումների գանձում» նշվում է «ՀԿԵ կողմից **65900741** (Վճարողի ծածկագիր)*, վճարումը ՖՏՍՃԿ միջոցով»:

2. Արևմտյան Եվրոպայի երկրներից բեռների փոխադրումների համար փոխադրման փաստաթղթերի ձևակերպման ժամանակ ՑԻՄ (ՑԻՄ/ԳԲՌՍ) բեռնագրի 7-րդ (Առաքողի հայտարարություններ) սյունակում նշվում է՝ «ՀԿԵ կողմից **65900741** (Վճարողի ծածկագիր)*, վճարումը ՖՏՍՃԿ միջոցով»:

3. Միջպետական հաղորդակցության փոխադրման փաստաթղթերի ձևակերպման ժամանակ «Վճարող» սյունակի դատարկ ամփոփիչ դաշտում նշվում է «ՀԿԵ կողմից **65900741** (Վճարողի ծածկագիր)*, վճարումը ՖՏՍՃԿ միջոցով:

** Վճարողի ութանիշ ԱՀ-ն համաձայն Պայմանագրի 1.4-րդ կետի:*

Երկաթուղի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն («ՀԿԵ» ՓԲԸ)

Վճարող՝ «ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ

Հասցե՝ 0005, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 50
Հեռախոս/ֆաքս՝ (+374 10) 57-27-22
Հեռ.: (+374 10) 57-36-74
Հ/համար ՀՀ դրամ՝ 160413023260
Բանկ՝«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ Էրեբունի մ-ճ
ՀՎՀՀ՝ 00448268
Էլ. հասցե՝ ctu@railway.am
Կայք՝ www.railway.am

Հասցե՝ Քաջազնունու փ.շ/2/22 կենտրոն
0018, Երևան, Հայաստան
Հեռ. քաղ.՝ +9217594083, +37455162078
Հեռ. բջջ.՝ +9217594083, +37455162078
Հ/համար ՀՀ դրամ ՝ 1510056263880100
Բանկ՝ Արարատբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00505151
Էլ. հասցե՝

ՖՏՍՃԿ պետ՝ Ս. Վ. Դորոխին

_____

Ստորագր. Կ.Տ.

Տնօրեն՝ Հենրիկ Մալերյան Փաշոյի

_____

Ստորագր. Կ.Տ.

Հավելված N 3

« »_____ 20 թ. կնքված

պայմանագրի

Վճարման հանձնարարագրի ձևակերպման կարգ

1. «Վճարման նպատակը» սյունակում

Վճարողը նշում է՝

2.1. Առաջին տողում՝ Վճարողի (սույն Պայմանագրի 1.5 կետ) ու ծառայության տեսակի և նրա հարկման կարգի ծածկագիրը (1 նիշ- բաժանվում է գծիկով «/»)*, բաժանված «կետ ստորակետ» նիշով՝

- ԱԱՀ 20% դրույքի դեպքում նշվում է 2;
- հարկման չենթարկվող ծառայությունների համար (հարկման օբյեկտ չհանդիսացող) նշվում է 1:

2.2. Երկրորդ տողում՝ տեքստային ֆորմատով

նշվում է սույն Պայմանագրի համարը և ամսաթիվը, ծառայության տեսակը և հարկման կարգը:

---

*

- Արտահանման հաղորդակցությունում փոխադրման ծածկագիր – 10E/1
- Ներմուծման հաղորդակցությունում փոխադրման ծածկագիր - 10I/2
- Տեղական հաղորդակցությունում փոխադրման ծածկագիր - 10L/2
- Լրացուցիչ ծառայությունների ծածկագրերը ներկայացված են «Բեռնափոխադրումների կազմակերպման ժամանակ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ կողմից տրամադրվող աշխատանքների և ծառայությունների գնացուցակի»՝ տեղադրված Երկաթուղու պաշտոնական կայքում (www.railway.am):

_____

Լրացման օրինակ՝

Արտահանման համար փոխադրում՝ բեռնափոխադրման վճարը – 200000 դրամ՝ առանց ԱԱՀ, վճար լրացուցիչ արտապլանային հայտի համար – 10000 դրամ՝ առանց ԱԱՀ:

Երկաթուղի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն («ՀԿԵ» ՓԲԸ)

Հասցե՝ 0005, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 50
Հեռախոս/ֆաքս՝ (+374 10) 57-27-22
Հեռ.: (+374 10) 57-36-74
Հ/համար ՀՀ դրամ՝ 160413023260
Բանկ՝«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ Էրեբունի մ-ճ
ՀՎՀՀ՝ 00448268
Էլ. հասցե՝ ctu@railway.am
Կայք՝ www.railway.am

ՖՏՍՃԿ պետ՝ Ս. Վ. Դորոխին

Ստորագր. Կ.Տ.

Վճարող՝ «ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ

Հասցե՝ Քաջազնունու փ.շ/2/22 կենտրոն
0018, Երևան, Հայաստան
Հեռ. քաղ.՝ +9217594083, +37455162078
Հեռ. բջջ.՝ +9217594083, +37455162078
Հ/համար ՀՀ դրամ ՝ 1510056263880100
Բանկ՝ Արարատբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00505151
Էլ. հասցե՝

Տնօրեն՝ Հենրիկ Մալերյան Փաշոյի

Ստորագր. Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ